

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Հոկտեմբերի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է բարձր 1-2 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են հոկտեմբերի 28-ին. Տավուշում գրանցվել է +23…+25^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +16…+18^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +23…+25^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +27…+29^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +22…+25^{0}C, Շիրակում՝ +15…+20^{0}C (Աշոցք՝ +14^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +14…+17^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +18…+20^{0}C, Գեղարքունիքում՝ +16…+20^{0}C (Սեմյոնովկա՝ +14^{0}C), Լոռիում՝ +20…+25^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +22…+24^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +14…+16^{0}C, նախալեռներում՝ +17…+22^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հոկտեմբերի 31-ին. Տավուշում գրանցվել է +2…+4^{0}C (Դիլիջան՝ -2^{0}C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -2…-4^{0}C, նախալեռնային շրջաններում՝ -1…+1^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +4…+7^{0}C, նախալեռնային շրջաններում՝ -1…+1^{0}C (Սիսիան՝ -4^{0}C), Շիրակում՝ -4…-8^{0}C (Արթիկ՝ -2^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -1…-5^{0}C, նախալեռնային շրջաններում՝ -1…+1^{0}C, Գեղարքունիքում՝ 0…-5^{0}C (Գավառ՝ -8^{0}C), Լոռիում՝ -4…-7^{0}C (Օձուն՝ -1^{0}C), Արմավիրում՝ -2…+2^{0}C Արարատում՝ 0…+3^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -5…-7^{0}C, նախալեռներում՝ +1…+4^{0}C:



Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 18-27մմ (97-163%), Լոռիում՝ 13-19մմ (78-117%), Տավուշում՝ 8-21մմ (45-127%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 14-26մմ (82-183%), նախալեռներում՝ 8-23մմ (51-181%), Գեղարքունիքում՝ 4-20մմ (38-130%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 13-26մմ (57-104%), նախալեռնային շրջաններում՝ 9մմ (61%), Արմավիրում՝ 6-8մմ (68-79%), Արարատում՝ 10-16մմ (97-195%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 25մմ (89%), նախալեռնային շրջաններում՝ 13մմ (114%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 1-4մմ (6-43%), նախալեռնային շրջաններում՝ 1-7մմ (4-54%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են հոկտեմբերի 31-ին. լեռնային և նախալեռնային շրջաններում՝ -3...-8^{0}C (Գավառ՝ -11^{0}C), հովտային շրջաններում՝ 0....+2^{0}C:



Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Հողի արդյունավետ խոնավության պաշարները լեռնային շրջաններում հողի 20սմ խորության վրա կազմել են 15-25%, նախալեռնային շրջաններում՝ 15-28%, հովտային շրջաններում՝ 20-35%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-30%, նախալեռնային շրջաններում՝ 17-30%, հովտային շրջաններում՝ 20-38%:

Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Առանձին լեռնային շրջաններում կատարվել է հնդավորների, կաղամբի բերքահավաք:

Աշնանացան ցորենի վեգետացիան ամենուրեք շարունակվել է: Առանձին լեռնային շրջաններում աշնանացան ցորենը թփակալել է, տեղ-տեղ առաջացել են հանգուցային արմատները, մնացած շրջաններում այն գտնվել է երրորդ տերևի և ծիլերի առաջացման փուլերում:

Հովտային շրջաններում սկսվել է խաղողի վազի այգեթաղի աշխատանքները: